



Téléphone C. 03-97

Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԺԻ. Տարի - ԴԵԿՏԵՄԲԵՐ 1938 ☒ 14^{me} Année - Décembre 1938

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ — Խաւարէն Լոյսի	Յ. Ն. Ղ.
ՀՈԳ. ԿԵԱՆՔ — Ուրախանալու արուեստը	Թրգմ. Ն. Մ.
» » Աստուծոյ ծառան	Թարգմանարար
Ս. ԳՐԱԿԱՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ — Ութը ուխտերը	Scoffieldէն
ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ — Տէրոջը հրաշքը իմ վրաս	Հոպսի վարդերեան
ՊԱՏՄԱԿԱՆ — Մեծ դէմքեր ու դէպքեր Հայոց հաւատոյ ընտանիքէն.	Բրոֆ. Գ. Գ. Խայիկեան
ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅՈՒՇԵՐ — Օգտակար դասեր	Զոհարթ Մ Պօզօգլեան
Դուք շնորհքով փրկուած էք	Թրգմ. Յ. Խ. Տոմկալեան
ՄԱՆԿԱՆՅ — Վաղանձի թղթակցութիւն	Սամուէլ Պ.
» Յիսուս ծնունդ	***
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ	
Ցանկ նիւթոց.	
ԵՐԳ — Միայն Յիսուսով	Յ. Ն. Ղ.

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսագիրքը Թէեւ Փրանսահայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպաստով ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըզգան Աստուծոյ խօսքին անխառն
վկայութեամբ: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կտրու մը
անհասներու համար, այլ ամենուն, բնական ճշմարիտ «Բան»ին
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանուանութիւն մը,
հասար մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

«ԲԱՆԲԵՐ» հոգեւոր ամսագիրքը կը հրատարակուի Մարտէլի մէջ 16 էջերով (կողքէն զատ
անոր խմբագրական յարմնին անդասներն են
Վեր. Բ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Վեր. Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ, Վեր. Ա. Օ. ՓԱՓԱԶԱՆ, Վեր. Զ. Բ. ՊՈՒՏԱՔԵԱՆ
Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատ. Վ. ՍԱԶԱԿԵԱՆ, Պատ. Ի. ԱՐԲԱԶԱՄԵԱՆ, Պատ. Մ. ՎԵՔԻԼԵԱՆ

ԲԱՆԲԵՐի համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերաին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
սոյցելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելն Քրիստոսով:
Յօդուածաւարքեր միջեւ, որ ամփոփութիւնով խմբագրութեան
ձեռքը չհասնին, նկատի չեն առնուիր:

Յօդուածներ կարելի եղածին ջափ բնեւեւելի եւ մեկամով գրուած
ծուղին մէկ կողմին վրայ միայն եւ ԿԱՐՃ րլլալու են: Խմբա-
գրութիւնը յօդուածները յապաւելու եւ սրբագրելու եւ օգտակար
դարձնելու համար փոփոխութիւններ ընելու ինչպէս նաեւ զանոնք
չհրատարակելու իրաւունքը իրեն կը վերապահէ, քանզի իրօք
կուզան լաւ յօդուածներ որոնք երբեմն կրկնութիւն են
առաջուրնէ հրատարակուած խորհուրդներու: Այսպիսիներ զանց
կ'ընենք, որիչ յօդուածներու տեղ աւելու համար:

ԲԱՆԲԵՐի բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կանխիկ
բաժանորդագրութիւնը կ'սկսի ամէն տարի ցունուարին
եւ կը վերջանայ Գեղտեմբերին:

— ԲԱՏՆԵԳԻՆՆ Է —

Ֆրանսա 25 Ֆրանք, Սուրիա 20 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

Դ Ի Ի Ր Ո Ի Թ Ե Ա Ն Հ Ա Մ Ա Ր
Հ Ե Տ Ե Ի Ե Ա Ն Բ Ա Ց Ա Տ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ամերիկայէն travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ զրկուիլ:
Ուրիշ երկիրներէ \$ 1.25ի համարժէք ամէն տեսակ դրամ:
Յօդուածները կ'ընկու են Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆի
խկ թղթակցութիւններ եւ դրամական առաքումներ
Վեր. Բ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆի անունով, երկուքն ալ
հետեւեալ հասցէով:—


Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN
7, Rue Papère
MARSEILLE (France)

Մանտայով դրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտային վրայ գրել
H. N. Ghazarossian, 7, rue Papère - Marseille (France) C. C. No. 182.53-Marseille

Արթնցի'ր դուն
որ կը քնանաս, ես
կանգնեմ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Է. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ թէ
Անոր հանգիստը մտնելու խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Եբր. Գ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Եբր. Ժ. 37

ԺԴ. ՏԱՐԻ

Դեկտեմբեր 1958

Թիի 12



ԽԱՒԱՐԷՆ ԼՈՅՍԻ

Մահուան ստուերին երկիրը
ընակողներուն լոյս ծագեցաւ:

Եսայ. Թ. 2

Մենք ՊՅ Ա. Գլխուն մէջ կը կարդանք. «Ան-
դունդին վրայ խաւար կար»: Ի՞նչ խոր
ըլլալու է այս խաւարը: Ասիկա արդիւնքն է
մեղքին ու անօրէնութեան, որ երեւան եկաւ
տիեզերքի մէջ մարդս ստեղծուելէ շատ առաջ:
Աստուած իր հրեշտակապետներէն միոյն ու
անոր բանակին վրայ անօրէնութիւն գտած էր,
անոնք խաւարի մէջ էին, հեռացած Անոր
սրբութենէն: Սակայն խաւարը երկար պէտք
չէր մնար: Բառսը իր տակն ու վրայութեամբ
աւելի տեսելու չէր, պէտք էր կրկին կարգ ու
սարքը մտնէր արարչագործութեան մէջ, վասնզի
Աստուած գործ ունէր կատարելիք, ուրեմն
հրաման կ'ընէր լոյս ծագելու, որպէս ազգարար
իր ներկայութեան: Աստուած լուսոյ մէջ կը բնա-
կի, լուսոյ մէջ կը գործէ, Ինք լոյս է: Խաւարը
չկրնար զիմանալ Անոր առջեւ: Լոյսով Ինքը
կրկին գործի սկսաւ: Սակայն խաւարը նորէն
մուտ գտաւ Աստուծոյ ստեղծագործութեան մէջ:
Այս անգամ Սատանան, ստութեան հայրը, մար-
դուն ազատ կամքը շահագործելով անոր վրայ
ազդեց և զայն գերի բրաւ: Մարդուն անկումը
իր մէջ վախի ու լոյսէն փախչելու զգացումը
երեւան բերաւ: Ու Ադամ իր մերկութիւնը, մե-
ղաւորութիւնը ծածկելու համար չղիմեց Անոր,
Սաղմ. ԼԲ. 5, 6, այլ ջանաց անձամբ ծածկել
ինքզինքը և չյաջողեցաւ:

Մարդկութեան վրայ խաւարը այս կերպով
սկսաւ թանձրանալ, մարդիկ երթալով աւելի
հեռացան Աստուծմէ, սակայն չէին կրնար հան-

գիստ ընել խաւարի մէջ: Այս է մարդկութեան
ընդհանուր ուղղութիւնը, մեղքը չեն սիրեր,
բայց մեղք կը գործեն, ու երբ իրենց մեղաւոր
փափաքները կատարուած են, անոնք կատար-
ուելէն առաջ եղածէն աւելի թշուառ կ'զգան
ինքզինքնին: Ի՞նչ խղճալի մարդկութիւն:

Շարունակական խեղճութիւնը առանց մխի-
թարութեան՝ յուսահատութեան կը տանի և
յուսահատութիւնը մահուան: Հին ժամանակները
մեծ փիլիսոփաներ և բարոյագէտներ (Ինչպէս
Սոկրատ, Պլատոն, Արիստոտէլ) շատ գեղեցիկ
բարոյախօսեցին, տեսնելով անկեալ մարդկու-
թեան անյոյս վիճակը, և ցոյց տուին աւելի
բարոյական կեանքի մը կարեւորութիւնը, սակայն
բնաւ չկրցան ո՛չ անոր հասնելու միջոցը ցոյց
տալ, ո՛չ ալ դարման մը գտնել մեղքէն ազատ-
ուելու: Մարդկութիւնը մահուան ստուերին մէջ
կը բնակէր: Մահուան ստուերի երկրէն մարդ-
կութեան համար յոյսի նշոյլ մ'իսկ չկար:

Հարկ էր երկրէն դուրս գտնուող բարձր տեղէ
մը գերագոյն գորութիւն մը ձեռնմուխ ըլլար: Ու
ահա Աստուածային հզօր բազուկը մերկացած
անձամբ շարժեց իր մականը: Ինչպէս շարժեց
ընութեան քառսին վրայ լոյս ծագելով, նոյնպէս
իր մականը շարժեց Լոյսը ծագեցնելով մարդկու-
թեան հոգեկան աշխարհին վրայ, զանիկա լու-
սաւորելու համար: «Ճշմարիտ Լոյսը Ան էր, կ'ըսէ
աւետարանիչը, որ աշխարհ եկող բոլոր մարդիկը
կը լուսաւորէ»: Այս ճշմարիտ Լոյսը բուն իսկ
«Բանն» էր: Բանը որ երկինքէն իջաւ և միջնորդը

եղաւ: Աստուծոյ և կորուսեալ մարդկութեան միջեւ: Ինքը բուն իսկ Աստուած էր, մարմինով յայտնուած, Հօրմէն միածնի փառքովը փառաւորեալ, որ լեցուն է շնորհքով ու ճշմարտութեամբ:

Ուրեմն ո՛վ մեղաւոր, Ծննդեան տօնական օրերու առթիւ դուն որ Բեթլեհէմի մասերին առջեւ կայնած կը դիտես այդ խեղճուկ երեւոյթով մանուկը, գիտցիր թէ Անիկա այս աշխարհէն չէ, հապա վերէն կուգայ և իր մէջը պարփակուած ունի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը:

Հոն, այդ մանուկին մէջ բացուած կը զբտնես Աստուծոյ սիրող սիրտը, որ զքեզ մահուան ստուերի երկրէն ազատելու համար ամենամեծ զոհողութիւնն ըրած է, քանզի ատկէ աւելի բարձր դին չէր կրնար վճարել քեզի համար: Այդ սիրոյն չափը չէ կարելի ըմբռնել թեթեւ երեւակայութիւնով մը, զայն ըմբռնելու համար միտքդ և սիրտդ միասին զործածելու ես:

Դիտցիր թէ այդ մեծ զոհաբերութեամբ բացուած սիրտը ստիպողական պահանջ մը ունի քեզմէ: Անիկա քու սիրտդ կը պահանջէ: Անիկա Ինքզինքը տուաւ քեզի և զքեզ կը պահանջէ իրեն համար:

Այս պահանջը չէ ետասիրական, հապա կրկին քու սիրոյդ համար, քանզի ինչպէս որ դուն խաւարին մէջ խաբխափելով չկրցար լոյսին հասնիլ, լոյսն ալ տեսնելով կրկին քու ուժերովդ չես կրնար քու Արարչիդ հասնիլ: Տուր սիրտդ Անոր, յանձնուէ բոլորանուէր, որպէսզի Անիկա զքեզ նոր ստեղծուած մը ընէ և որպէս այն առաջնորդէ քեզի, և դաստիարակէ զքեզ երկնային կեանքին համար, որուն դուն արդէն կանչուած ես ի սկզբանէ անտի, որմէ սակայն ինկած ես գերող մեղքին պատճառաւ: Կ'ուզե՞ս ազատուիլ խաւարէն, սոսկումէն և վախէն, խոնարհէ և ծնրադրէ Անոր առջեւ, ընդունէ զԱյն որպէս քու Փրկիչդ, որ պիտի տայ քեզի Աստուծոյ որդին, ըլլալու իշխանութիւնը: Աստուծոյ որդի ըսել է լուսոյ որդի, վստահութեան, անվստահութեան, յաղթութեան որդի: Դուն ո՛չ միայն պիտի չվախնաս մահուանէ, հապա Աստուծոյ հետ հաշտուած ըլլալով, խաղաղութիւնն ունենաս սրտիդ մէջ, զիտակցիս քու վիճակիդ, վստահ քու դիրքիդ, ունենաս նպատակ մը և նշանակակէտ մը. ունենաս զօրութիւն Անով այդ նպատակին հասնելու:

Մսուրին մէջ պտկած այդ մանուկը քու կեանքիդ Ամենն է ամեն բանի մէջ: Ամեն պիտոյքներդ ալ Անով լեցուած են ու պիտի

լեցուն: Անիկա հանգիստ չպիտի ընէ, մինչեւ քեզ Իր աթոռին վրայ նստիլ չտայ:

Ծննդեան տօնի առթիւ, ուրեմն ո՛վ սիրելի հոգի, քեզի է այս կոչը: Քեզի բացուած է Աստուածային այս սիրտը իր բոլոր խոստումներով, չըլլայ թէ մերժես զԱյն, մերժել խաւարի մէջ ապրիլը շարունակել ըսել է մահ ըսել է ու Աստուած չուզեր քու մահը:

Ընդունէ զԱյն, կեանք կայ քեզի համար, յաւիտենական կեանքը, որ է բոլոր մարդկային գերազոյն և սուրբ բաղձանքներուն և երջանիկ յոյսին իրականացումը:

Արթնցի՛ր դուն որ կը քնանաս և կանգնէ՛ մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ:

Մսուրին մէջ պտկած մանուկը Աստուծոյ եկեղեցիին ալ պատգամ ունի: «Քանզի թէեւ ատեն մը դուք խաւար էիք, բայց հիմա լոյս էք Տէրոջ մով, լուսոյ որդիներու պէս քալեցէք»:

Լուսոյ որդին Իր Հօրը նմանելու է, քու առջեւդ ասպարէզ կայ, մի՛ տկարանար, մի՛ հեղճանար, հապա բաց երեսով Տէրոջը փառքը որպէս թէ հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերէն նորոգուէ փառաց ի փառս:

Ուրեմն Ծննդեան տօնական օրերը Աստուծոյ բոլոր զաւակներուն համար անձնաքննութեան, սրբացման և աշխարհը թօթափելու օրեր են: Հայելիին մէջ իր ազատութիւնը տեսնողը, անմիջապէս մաքրութեան միջոցներու կը դիմէ: Դիմէ Յիսուսի, Անոր կատարելութենէն և սրբութենէն բաժին առ, Ծննդեան օրերը այս ներքին օրհնութեանց համար ամենայարմար ժամանակներն են:

Աստուծոյ զաւակները պատգամ մըն ալ ունին: Անոնք լսելու են թարմ պարտականութիւնը երթալ պատմելու մահուան ստուերին երկիրը բնակողներուն թէ «լոյսը ծագեցաւ»: Յիսուս ծնաւ և յայտնեցաւ: Աստուածային բազուկները սիրալիր և բաց են ընդունելու այն ամենը, որոնք իրեն կուգան և Աստուած այս աշխարհ եկող Մանուկով կը հրաւիրէ ամենը ընդունելու, հաշտութիւն, խաղաղութիւն լոյս և կեանք:

Ծննդեան տօնական այս ուրախարար պատգամներով տոգորուած, զիրար քաջալերենք և իրարու ձեռնտու ըլլանք, որքան որ Անոր գալու ատենը կը մօտենայ:



ՈՒՐԱԽԱՆԱԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Ուրախ եղէք Տէրոջմով ամէն ստեղծ:

Փիւ. Դ 4

Այս խրատը կը տրուի ծերունիէ մը որ Կայսերական Հոռովմի բանտարկեալն է: Անտարբեր անհատի մը մեղկ խօսքը չէ այս, այլ դժուարութեան ու կռուի մէջէն հնչող զօրացուցիչ յորդոր մը: Ծերունիներու արտայայտութիւնները այսքան եռանդուն ու զուարթ չեն ըլլար առ հասարակ: Անոնց երգերը կ'սկսին նուաղիլ, լոյսերը աղօտանալ ու յոյսերը մարիլ: Ծերերը հակամէտ են անցեալը վերյիշելու և հին մտածումներու տակ դառն արտասուքներ թափելու: Անոնք կը սիրեն մտարերել այն պայծառ առաւօտները որ անցան: Չեն նայիր Արեւելքին՝ ուսկից նոր առաւօտներ կը ծագին. ուրեմն անոնց Սաղմոսը մահերգի կը վերածուի ու անոնց երգը՝ տխուր մեղեդիի մը: Սակայն հոս ունինք ծերունի մը որուն երեկոյեան երգը ուրախութեամբ լեցուն է: Տաժանելի պարագաները կարծրացուցած չեն անոր սիրտը: Առերեւոյթ ձախողութիւններ բթացուցած չեն անոր զգայարանքները: Անիկա տակաւին կը գնահատէ կեանքի էական անուշութիւնները: Տխրութեամբ չի մտածեր անցեալ փառքերուն և վերջ գտած հաճոյքներուն վրայ: Կ'զգայ թէ առաւօտը մօտ է ու այսօրուան ցաւը աւելի փառաւոր առաւօտեան մը ծնունդը աւետող լուր մըն է: Ներկայ դառնութիւնը ամենէն անուշահամ պտուղին տեղի պիտի տայ: Հոռովմ թէպէտեւ կրնայ Առաքեալը իր ընկերակիցներէն հեռի պահել, բայց չի կրնար զայն իր Տէրոջմէն զատել: Բանտարկեալին խցիկին մէջ տակաւին երկու հոգիի տեղ կայ ու ոչ մէկ աշխարհային դաւադրութիւն կարող է զայն իր մեծ ընկերակիցէն զրկել: Տէրը իր հետն է, ուրեմն բանալը Անոր լոյսով կը ցոլայ: Անոր ծերութիւնը ուրախութեամբ լուսաւորուած է: Երկրպագութեան սաղմոսներ կը բարձրանան զիշեր ու ցորեկ: Ուրեմն բանտարկեալը կարող է իր հաւատակիցները խրախուսել «Ուրախ եղէք Տէրոջմով ամեն ստեղծ» խօսքով:

Արդ եթէ այս խրատը մեզի կը ցուցնէ իտէալ մը որուն հասնիլ կարելի է, յայտնի է թէ քրիստոնէական ուրախութիւնը մեր անմի-

ջական պարագաներէն անկախ արամադրութիւն մըն է: Եթէ մեր միջավայրէն կախում ունենար, պիտի նմանէր մերկալի գիշերուան մը մթուն անպատսպար՝ վառող մոմի մը որ մէյ մը լոյս կուտայ, մէյ մը չերեւնար ու վերջապէս բոլորովին կը մարի: Սակայն քրիստոնէական ուրախութիւնը կեանքի վաղանցիկ երեւոյթներու հետ յարաբերութիւն չունենալով՝ խաւար օրուան զոհ չերթար: Մեր պարագաները մէյ մը Յունիսի պայծառ օրերուն կը նմանին, մէյ մըն ալ նոյեմբերի մոայլ օրուան մը երեւոյթը կ'առնեն: Մէկ օրը հարսանեկան հանդէսի մը մէջ կը գտնուիմ, յաջորդ օրը բաց գերեզմանի մը առջեւ: Ծառայութեանս մէջ օր մը տասը հոգի Տէրոջը համար կը շահիմ, երբեմն ալ երկար օրեր մէկը չեմ շահիր: Մեր օրերը օգին պէս շուտ շուտ կը փոխուին, սակայն քրիստոնէական ուրախութիւնը կրնայ յարատեւ ըլլալ: Արդ ինչի՞ մէջ կը կայանայ անոր շնորհալի յարատեւութեան գաղտնիքը:

«Ահա ամեն օր ես ձեզի հետ եմ»: Բոլոր մեր փոփոխական օրերուն մէջ Ան չի փոխուիր ու չի յոգնիր: Անիկա միմիայն պայծառ օրերուն մէջ չի ընկերանար մեզի, այլ ցուրտ ու մութ օրերու մէջ ալ մեզի հետ է: Յաջող օրերու մէջ միայն չերեւնար, հապա մեզի կ'ընկերանայ նաեւ մեր չքաւորութեան ու պարտութեան օրերուն: Չ'ընկերանար մեզի միայն երբ ուրախութեան պսակը կը տեսնէ մեր ճակտին, այլ մեզի հետ է նաեւ երբ փշեղէն պսակներ կը կրենք: Ինծի հետ է «ամեն օր», յաջող օրերու մէջ ու ձախող օրերու մէջ: Այն օրերուն որ յուղարկաւորութեան զանգակներ կը հնչեն՝ ինչպէս նաեւ այն օրերուն որ հարսանեաց զուարթ աղաղակներ կը բարձրանան: «Ամեն օր» կեանքի օրը, մահուան օրը ու դատաստանի օրը:

Ահաւասիկ մշտնջենական ուրախութեան գաղտնիքը: Ամենէն կենսական յարաբերութիւնը ոչ թէ իմ ու յեղյեղուկ պարագաներու միջեւ է, այլ իմ ու անփոփոխ բարեկամի մը միջեւ կը գտնուի: Եթէ պարագաներէ քաշեմ իմ ջուրս, իմ աղբիւրս չորնալու ենթակայ է, սակայն երբ փրկութեան աղբիւրներէն քաշեմ, յաւիտեանական կեանքի յորդառատ ջուրերը իմ կ'ըլլան: «Անոր համար պիտի չի վախնանք, թէեւ երկիրը փոխուի, ու լեռները ծովուն մէջ տեղը ձգուին... Զօրաց Տէրը մեզի հետ է»:

Աստուծոյ ներկայութիւնը իր կեանքին մէջ իրականացնելու մէջ մասնագէտ էր Պօղոս Առաքեալը: Անիկա այնպէս վարժեցուցած էր իր

հոգեւոր զգայարանքները որ զանազանելու սուր կարողութեան մը հասած էր: Աստուածայինին համար նուրբ զգացում մը ունէր: Անոր համար Տէրոջը ներկայութիւնը նոյնքան զգալի էր բանտին մէջ՝ որքան տաճարին մէջը: Այնչափ զգալի Փեստոսի ու Ազրիպպայի առջեւ՝ որչափ Փիլիպպէի գետին եզերքը ազօթող կիներուն ժողովին մէջ: Ամեն տեղ իր Տէրոջը ներկայութիւնը կ'զգար և ուրեմն կրնար ամեն ատեն Տէրոջմով ուրախ ըլլալ: Տէրոջը ներկայութիւնը զգալ՝ Անոր ուրախութեանը մէջ մտնել կը նշանակէ, ու Տէրոջը ուրախութիւնը մեր զօրութիւնն է:

Պօղոսի բոլոր խորհուրդներուն մէջ Տէրը առաջին տեղը կը գրաւէր: Անոր բոլոր նպատակները Տէրոջմով կ'սկսէին ու Տէրոջմով կը վերջանային: Միայն ձախորդութեան մէջ ու նեղը ինկած պարագային Տէրը չէր փնտռեր: Տէրը Անոր Ալֆան էր: Ամեն բանի սկիզբը: Անկէ խորհուրդ կը փնտռէր: Տէրը նաեւ անոր Օմեղան էր: Ամեն բան Անով կը կատարուէր: Երբ մէկու մը միտքը աշխատէ կեդրոնացած ու հաստատուած է Տէրոջը վրայ՝ օր ըստ օրէ աւելի լաւ կը հասկնայ իր Տէրը ու այնպիսի ուրախ վստահութեամբ մը կը լեցուի որ որ եւ է պարագայ չի կրնար յափշտակել իր ուրախութիւնը: Այսպիսի ուրախութիւն մը մնայուն է ու մինչեւ աշխարհի վերջը հետզհետէ կ'աճի:

Թարգմ. Ն. Մ.

ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՆ (*)

Հին ժամանակներու մարգարէները եհովայի բերանն էին: Աստուած անոնց մէջ և անոնց միջոցաւ խօսեցաւ: Անոնք Աստուծոյ կողմէ հրապարակ զրուեցան: Աստուած հանեց զանոնք, կանչեց, կարգեց, ընտրեց, յարմարեց, գօտեւորեց և զրկեց զանոնք իր ծառաներն ու պատգամաբերները ըլլալու: Անոնք Աստուծոյ անուանովը խօսելու էին, Անոր հրամանին կը հնազանդէին և միայն Անոր հաշիւ կ'ուտային:

Անոնք նաեւ ազգին ղէտերն էին, պահպանութեան պարսպին վրայ կենալու և ժողովուրդը

(*) Սոյն գրութիւնը կարգացուած է Վահան եղբայր Սահակեանի կողմէ, Սամուէլ եղբայր Պապաւեանի միտմանարարական ձեռնարկութեան առթիւ ի Հիօն:

Խմբագրութիւն

զգուշացնելու. այնքան մեծ էր անոնց պարտականութեան պատասխանատուութիւնը՝ որուն թերացման պարագային կորսուող ամբարշտին արիւնը մարգարէին ձեռքէն պիտի պահանջուէր:

Անոնք ըլլալու էին Աստուծոյ հաւատարիմ և մարդոց հանդէպ համարձակ, անվախ՝ բայց խոնարհ և հեզ, անխոնջ և անձնագոհ: Շատ քիչ անգամներ և շատ քիչ պատիւ կ'ընդունէին անոնք, ընդհակառակը՝ յաճախ շատ հալածանք և չարչարանք կար, և մահուան վտանգ ու մահը կ'սպառնային իրենց միշտ:

Քիչ մը տարբեր կերպով՝ բայց նոյն սկզբունքներուն վրայ՝ Նոր Կտակարանի առաքելներն ալ ընտրուեցան, պատրաստուեցան, գօտեւորուեցան և զրկուեցան Արքայութեան Աւետարանը քարոզելու:

Քրիստոսի ծառան Քրիստոսի ղեկավարն է, Աստուծոյ կողմանէ կը բարեխօսէ ու կ'աղաչէ մոլորած հոգիներուն որպէսզի անոնք հաշտուին Աստուծոյ հետ: Անիկա Քրիստոսի սպասաւորն է և Աստուծոյ խորհուրդներուն տնտեսը: «Արդ տնտեսներուն մէջ կը փնտռուի որ մէկը հաւատարիմ գտնուի»: Անիկա միայն մէկ պատգամ ունի, և այդ պատգամը Քրիստոս ինքն է: Աստուած անոր հաւատացած է փրկութեան Աւետարանը, և անիկա պարտի խօսիլ այնպէս՝ ոչ թէ մարդոց հաճոյ ըլլալու համար՝ հապա Աստուծոյ, ոչ թէ խօսքերու ճարտարութիւնով և մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով՝ որպէսզի Քրիստոսի խաչը ոչինչ չըլլայ:

Քրիստոսի ծառան նեղութիւններու կը համբերէ Յիսուս Քրիստոսի բարի զինուորի մը պէս: Անիկա այս կեանքին զործառնութիւններովը չզրազիր՝ որպէսզի Զօրավարին հաճոյ ըլլայ: Նա պիտի ունենայ քաջ սիրտ մը և վէմէն ամուր ագամանդեայ ճակատ մը: Անիկա Աստուծոյ զործակիցն է և պարտի ըլլալ իմաստուն ճարտարապետ մը՝ մանաւանդ հիմը դնելու ատեն: Անիկա պիտի զործէ ոչ միայն Աստուծոյ համար՝ հապա Աստուծոյ հետ: Անիկա կը նշանակէ նպատակի, փափաքի, դիտաւորութեան և ջանքի մէկութիւն Աստուծոյ հետ: Անիկա Աստուծոյ համար խօսելէ աւելի զործող մը պիտի ըլլայ: Անիկա ջանք պիտի ընէ իր անձը ընտիր ցուցնել Աստուծոյ առջեւ, այնպիսի բանուոր մը ըլլալով որ պիտի չամչնայ, ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով:

Սուրբ Գիրքը յստակօրէն կը ցուցնէ թէ Քրիստոսի ծառան պէտք է ըլլայ մտքով խոնարհ

և սրտով զթառատ, կեանքով սուրբ և խղճմտանքով մաքուր, համբերող և երկայնամիտ, բարքով անարատ և անմեղադրելի, անշահախնդիր, անձնուրաց և անձնագոհ, անաչառ և աննախապաշար, կարեկցութեամբ լեցուն և հեղահոգի, խոհեմ, արդար, սուրբ, ժուժկալ, հիւրասէր, բարեսէր և անոխակալ, սորվող և սորվեցնելու յարմար, աղօթքով արթուն և հսկող, դայեակ մը, եղբայր մը և հայր մը իր ժողովուրդին, օրինակ մը հաւատացեալներուն, իր տանը աղէկ վերակացութիւն ընող՝ իր զաւակները հնազանդութեան մէջ պահելով բոլոր ծանրաբարոյութեամբ, արցունքով խրատող, երկայնատութեամբ յորդորող և սաստկութեամբ յանդիմանող:

Քրիստոսի ծառան պարտի ունենալ զեապանի մը պատգամը, հովիւի մը հոգածութիւնը, կառավարիչի մը երկիւղը, ձկնորսի մը համբերութիւնը, հօր մը զուլթը, առաջնորդի մը քաջութիւնը, պահապանի մը արթնութիւնը, հողագործի մը քրտինքը, ճամբայ գտնելու մէջ ուղեցոյցի մը ճկունութիւնը, մարգարէի մը երկնառաք ներշնչումը, ուսուցչի մը գիտնականութիւնը և փրկչի մը սէրը:

(Թարգմանաբար)



Ս. ԳՐԱԿԱՆ
ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝
SCOFFIELDԷՆ
Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՈՒԹԸ ՈՒԹՏԵՐԸ

(Շարունակութիւն անցեալ թիւէն)

8. Նոր ուխտը. եբր. Ը 8. — Ութերորդ, վերջին և յաւիտենականօրէն օրհնեալ ուխտն է Նոր ուխտը:

ա. Այս ուխտը Մովսիսական ուխտէն աւելի գերազանց է, ոչ թէ բարոյապէս՝ հապա կատարուելու զօրութեամբ: «Օրէնքը բան մը կատարեալ չըրաւ», «այն որ անկարելի էր օրէնքին... Աստուած իր Որդին զրկեց... որպէսզի օրէնքին արդարութիւնը կատարուի մեր մէջ» (Եբր. Է 19, Հոով. Ը 3, 4):

բ. Այս ուխտը հաստատուած է աւելի լաւ (ոչ պայմանադրական) խոստումներու վրայ: Մովսիսական ուխտին մէջ Աստուած ըսաւ. «Եթէ կատարէք». Ելից. ԺԺ 5. Նոր ուխտին մէջ Նա կ'ըսէ «Ես պիտի ընեմ» — «Քանզի այս է այն ուխտը զոր Իսրայէլի տանը հետ պիտի ընեմ... կ'ըսէ Տէրը... պիտի դնեմ... պիտի գրեմ... պիտի ըլլամ... ներող պիտի ըլլամ... անօրէնութիւնները ա'լ պիտի չյիշեմ». Եբր. Ը 10—12:

գ. Մովսիսական ուխտին տակ՝ հնազանդութիւնը վախի արդիւնքն էր. Եբր. Բ 2, ԺԲ 25-27 Նոր ուխտին տակ ասիկա կը բղխի յօժարակամ սրտէ մը և միտքէ մը. Եբր. Ը 10:

դ. Նոր ուխտը իւրաքանչիւր հաւատացեալի համար Տէրոջը անհատական յայտնութիւնը կ'ապահովէ, «ու բնաւ պիտի չսորվեցնեն ամեն մէկը իր ընկերին, և ամեն մէկը իր եղբօրը, ըսելով թէ Տէրը ճանչցիր, քանզի անոնց պատկէն մինչեւ մեծը ամենը զիս պիտի ճանչնան» Եբր. Ը 11:

ե. Նոր ուխտը կ'ապահովէ մեղքերու ալիւս բնաւ չյիշուիլը: «Ամեն տարի օրէնքի զոհերով մեղքերու յիշատակութիւն կ'ըլլայ»: Անոնց մեղքերը և անոնց անօրէնութիւնները ա'լ պիտի չյիշեմ» Եբր. Ժ 3, 17:

զ. Նոր ուխտը կատարուած փրկագործութեան մը վրայ կը կենայ. «ասիկա է իմ արիւնս Նոր ուխտի, որ շատերու համար կը թափուի մեղքերու թողութեան համար: Մատթ. ԻԶ. 28. Ա. Կոր. ԺԱ 25, Եբր. Ժ. 11, 12, 18—23:

է. Նոր ուխտը վերջապէս կ'ապահովէ մշտնջենաւորութիւնը, ապագայ ապաշխարութիւնը և օրհնութիւնը Իսրայէլի. «Այսպէս կ'ըսէ Տէրը որ արեւը հաստատեց օրուան լոյսին համար... Երեմ. ԼԱ 31—40: Ութերորդը ըլլալով՝ Նոր ուխտը կը խօսի յարութեան և յաւիտենական կատարելութեան վրայով:

Քրիստոս իր յարաբերութիւնները ունի ութը ուխտերէն իւրաքանչիւրին հետ, հետեւեալ կերպով.

1. Եղեմական ուխտին հանդէպ, Քրիստոս իբր «երկրորդ մարդը» «վերջին Ադամը» Ա. Կոր. ԺԵ 45—47. առաջին Ադամին կորսնցուցած բոլոր բաներուն վրայ կը տիրէ: «Գլուխ է բոլոր իշխանութեան ու պետութեան». «Ամեն բան Անոր ոտքերուն տակ հնազանդեցուցիր... անոր չհնազանդած բան մը չձգեց»: «Կող. Բ. 10, Եբր. Բ 8:

2. Քրիստոս Ադամական ուխտին մէջ խոստացուած «կնոջ սերունդն» է. Ծննդ. Գ 15. Բայց երբ ժամանակը լեցուեցաւ, զրկեց Աստուած իր Որդին որ կնոջմէ եղաւ, ու օրէնքին տակ մտաւ: Գաղ. Դ 4, Յովհ. ԺԲ 31, Ա. Յովհ. Գ 8, Յայտն. Ի 10: Այս ուխտին մէջի չարչարանքն ու հնազանդութիւնն ալ կատարեց Յիսուս: «Ու փուշերէ պսակ մը հիւսելով Անոր գլուխը դրին». Մատթ. ԻԷ 29:

3. Իբր Սեմի ամենէն մեծ որդին՝ Նոյեան ուխտին մէջ Սեմի եղած խոստումը գերազանցօրէն Քրիստոսի մէջ կատարուեցաւ: «Վասնզի Անոր մէջ կը բնակի Աստուածութեան բոլոր լեցունութիւնը մարմնապէս»: Կող. Բ 9:

4. Քրիստոս Աբրահամի ուխտին մէջ Աբրահամի սերունդն է որուն «խոստումները եղան», Աբրահամի որդին՝ որ մինչեւ մահուան հնազանդ եղաւ: Ծննդ. ԻԲ 18, Գաղ. Գ 16, Փիլ. Բ 8:

5. Քրիստոս Մովսիսական ուխտին տակ ապրեցաւ առանց մեղքի կեանքի մը և այդ ուխտին տուած անէծքը մեր տեղը և մեզի համար կրեց: Գաղ. Գ 10—13:

6. Քրիստոս Պաղեստինեան ուխտով մեզի կը ներկայանայ իբր հրեայ ազգի զաւակ մը որ Պաղեստինի երկրին վրայ բնակեցաւ և ապագային մէջ անոր շնորհալի խոստումները պիտի կատարէ: Բ. Օր. ԻԸ—Լ 1—9:

7. Քրիստոս Դաւիթեան ուխտին սերունդ «ժառանգն» է և «թագաւորը»: «Գիրք Ծննդեան Յիսուսի Քրիստոսի, Դաւիթի որդւոյն, Աբրահամի որդւոյն»: «Եւ Տէր Աստուած պիտի տայ Անոր իր հօրը Դաւիթի աթոռը»: Մատթ. Ա 1, Դուկ. Ա 31—33:

8. Քրիստոսի խաչին վրայ զոհուելը Նոր Կտակարանին հիմը կը կազմէ: «Վասնզի ես Տէրոջմէն ընդունեցի զայն որ ձեզի ալ աւանդեցի թէ Տէր Յիսուս իր մատնուած զիշերը...»: Ա. Կոր. ԺԱ 23—26:

«Տեսէք Հայրը ի՛նչպիսի սէր շնորհեց մեզի...»:

ՆՇՄԱՐՆԵՐ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Աւելի լաւ է տասն անգամ խաբուիլ վստահելով եւ ուղորմելով քան մէկ անգամ կասկածով եւ դժկամակութեամբ:



ՏԵՐՈՂԸ ՀՐԱՇՔԸ ԻՄ ՎՐԱՍ

ՈՍՈՍՈՍ

Իսթանուղ ծնած եմ 1903 ին: Աւետարանական եկեղեցւոյ զաւակ մ'ըլլալով քիչ թէ շատ Սուրբ Գրքէն տեղեկութիւն ունէի, միշտ Աստուծոյ վախը սրտիս մէջ կար: Բայց ապաշխարած եւ հոգւով ու սրտով Տէրոջը յանձնուած չէի: Զէի զգար նաև Յիսուսի մեր մեղքերուն համար մեռած ըլլալուն և Անոր հաւատալով յաւիտենական կեանք ունենալու արժէքը: Ամէն օր Ս. Գրքէն առտու իրիկուն կարդալը, աղօթելը սովորութիւն ըրած էի. Կիրակի օրերը սուրբ պահել, մեծերը յարգել, այս էր իմ առօրեայ կրօնական կեանքիս երեւոյթը, քանզի այս մասին մայրս միշտ կը խրատէր զմեզ բոլորս ժողոված ընտանեկան աղօթք ըրած առեւնը, Սուրբ Գրքէն պատմութիւններ կը պատմէր մեզի: Վերջապէս 17 տարիքիս ամուսնացայ: Նոր տունու երթալէն վերջ Ս. Գիրքս սնտուկին տակը նետեցի: Եկեղեցիին, կարդալուն, աղօթելու բոլորովին վերջ տալով սկսայ կամաց կամաց աւելի լայն ճամբան ձեռք առնել:

Բայց Տէրը զիս այցելեց, Ղուկաս ԺԺ 34 ու: «Ով Երուսաղէմ Երուսաղէմ, քանի անգամ քու զաւակներդ թեւերուս տակ ժողովել ուզեցի, բայց զուրք չուզեցիք» խօսքին համեմատ: Նոյնպէս այցելեց զիս, քանի անգամներ մեծ նեղութիւններ ի բարին գործածել ուզելով: Բայց ես այդ մեծ հրաւերը մերժեցի, քանի որ նեղութենէ ազատուելուս պէս կրկին կը մոռնայի զի՛նք: Բաւական ժամանակ Պօլիս մնացի: Հոն 3-4 տարի սուտ և անցաւոր աշխարհային կեանքն անցնելէ յետոյ, փոխադրուեցանք Պայալ Հաուզի եկեղեցիին մօտ, ուրկէ Մարի քոյր Ճինիեանի հետ Կիրակի օրերը միասին եկեղեցի կ'երթայինք, քարոզը մտիկ կ'ընէինք ուրախութեամբ, բայց եկեղեցիէն դուրս ելածնուս պէս Մատթ. ԺԳ 19, ճամբուն եզերքը իյնող ցորեններուն պէս բառ մը չէր մնար մտքերնուս մէջ, քանզի ճամբան Կիրակին ո՛ր ուրախութեան տեղը անցնելու մասին ծրագիր կը շինէինք: Անօգուտ զիրքեր շատ կը կարդայի ժամանակ անցնելու համար: 1930 ին Մարի քոյրին հետ միասին Աստուծոյ մեծ օգնութեամբ Ֆրանսա եկանք, Վիրիէօ գիւ-

ղը, հոն 1931ին կրկին Տէրը զիս այցելեց, այս անգամ ծանր հիւանդութիւնով մը: Փառք Տէրոջը որ ինծի մեղքերուս համեմատ չբռաւ և իր ողորմութեամբը այս նեղ ճամբուն մէջ զիս առաջնորդեց: Սուրբ Գիրքս սնտուկէն հանելով սկսայ կարդալ. անգամ մը լմնցուցի, բան մը չհասկցայ, անգամ մըն ալ սկսայ: Այն ատեն Աստուծոյ Հոգին սրտիս մէջ գործել սկսաւ: Վեր. Ժ. Կ. Պարսումեանին «Բանբեր»ի մէջ գրածին պէս, արծաթ լիճին կը նմանի Աստուծոյ խօսքը սերտելը. երկայն ատեն զիտել պէտք է, այն ատեն պիտի տեսնենք ոսկի գանձը: Օր մը Ղուկ. ԺԳ կը կարդայի: Սրտիս վրայ ծանր ազդեցութիւն մը գործեց սա խօսքը: «Եթէ դուք ալ Հապաշխարէք, պիտի կորսուիք»: Ասոր վրայ սրտիս մէջ փափաք մը արթնցաւ, աշխարհային վարմունքներէս դարձի գալով Տէրոջը յանձնուեցայ: Տէր Յիսուս առատ սրսկեց արիւնը սրտիս վրայ, փառք Ասոր սուրբ անուան: Բոլոր ոյժս Սուրբ Գիրք կարդալու տուի և Մարի քոյրին ալ կը պատմէի առած լոյսս: Այդ ատենները Լեւոն հայրիկ Նիկողոսեան Վերիէօ այցելութեան եկաւ, անկէ երգարան մը գնեցի: Ժողով. ԺԱ. 1ի համեմատ մօրս ցանած սերմը բուսնիլ սկսաւ, մօրս երգած երգերէն մի քանիները գտայ երգարանին մէջ և Մարի քրոջ հետ սկսանք ամէն Կիրակի երգել:

Քանի մը Շաբաթ վերջը Արուս քոյրը և մի քանի աղջիկներ ալ եկան մեզի միացան, գոհ մնալով մեր երգերէն և Սուրբ Գրքի պատմութիւններէն: Նոյն ատեն Ս. Գ. Լուսաւորչին գիրքը և ուրիշ գրքեր Պօլսէն բերել տալով կարդացինք և աւելի քաջալերուեցանք և Աստուծոյ սէրը մեր մէջ արծարծուեցաւ: Յետոյ «Բանբեր»ն ալ կը կարդայինք, վերջապէս ամէն Կիրակի դրացիներով հաւաքուած պգտիկ ժողով մը կ'ունենայինք, թէ Ս. Գրքէն թէ «Բանբեր»էն օգտուելով: Սակայն միայն կարդալով ու երգելով և առանց աղօթքի կը վերջացնէինք: Ինչ տկարիս թէ «Բանբեր»ը թէ թերթիկները շատ մեծ օրհնութիւն եղած են և հիմա ալ կ'ըլլան: Փառք Ըլլայ Տէրոջս, որ 1934 տարին շատ ուրախութեամբ անցուցինք ամէն շաբաթ 15-20 հոգիով ժողով ունենալով, որ ատեն Աստուած գործութիւն ալ տուաւ հրապարակաւ աղօթելու: Օր մը խորհեցայ թէ երկտող մը գրեմ Վեր. Ժ. Կ. Պարսումեանի «Բանբեր»ի հասցէով որ եթէ ժամակը կը ներէ հոգեւոր այցելութիւն մը տայ մեզի: Սակայն Տէրը ինձմէ առաջ գործած էր, քանզի անիկա Երկուշաբթի իրիկուան համար

Վերիէօ գալու պատրաստուեր է, երկտողէս առաջ եկաւ, և մենք քարոզը մտիկ րրինք ու շատ օրհնուեցանք: Ասոր վրայ ամիսը անգամ մը գալ որոշեց: Տէրը օրէ օր աւելցուց իր սէրը մեր մէջ, այնպէս որ ուր որ երթայի թէ ճամբան թէ տունս, թէ ֆապրիքան, ամէն օրեայ Ս. Գիրքէն առած լոյսս հանդիպածիս կը պատմէի:

Թէ հայերէն և թէ թուրքերէն «Բանբեր»ի ընտանիքին խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ, որովհետեւ ինչ տկարիս մեծ օրհնութիւններ եկած են անոնցմէ: 1937ին գործի պատճառներով իրարմէ բաժնուեցանք. Տէրը ամէնքս կեցուց տեղերնիս, օրհնեց և իր սէրէն չզատեց. ես կրկին փառք կուտամ Տէրոջը որ անարժանս իր շնորհած պարգեւները կը վայելեմ: Ներկայիս բոլոր փափաքս այս է որ մնացած կեանքիս բոլոր ժամերը իր փառքին համար գործածեմ, և փառաց պսակը ժառանգելու համար օր ըստ օրէ աւելնամ:

ՀՕՊՍԻ ՎԱՐԴԵՐԵԱՆ

Բօն-տը-Շէրիւի

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊԵՐ
ՀԱՅՈՑ ՀԱԻԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵԻ (353-373)

Սակայն հոս չվերջանար Ներսէս Պարթեւին դերը հայ եկեղեցական ու ազգային կեանքին մէջ: Անիկա աւելի մեծ գործ կատարած է հիմնելով բազմաթիւ.

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԵՐ. — Ել. ԼԳ 17—23 և ԼԴ 5—7 կը կարգաւք զարմանալի դէպքի մը նկարագրութիւնը: Մովսէս կը բաղձայ Աստուծոյ փառքը տեսնել: Եւ Նհովա կը կատարէ անոր այդ խնդիրքը խորհրդաւոր կերպով մը. կ'անցնի անոր առջեւ և ինքն անձամբ կ'աղաղակէ, «Տէր, Տէր, Աստուած ողորմած ու գթած»: Ատով Աստուած Մովսէսի կը հասկցնէ թէ իր փառքը արտաքին երևոյթներու մէջ չէ, ոչ ալ իր ստեղծագործած ամենակարողութեանն ու իմաստութեանը մէջ. ոչ եւս իր սրբութեանն ու ասկէ բխող բարութեանը մէջ. հապա իր ողորմութեանը, գութին, — Նոր

կտակարանի բացատրութեամբ շնորհքին, — մէջն է, որ է նիւթական, ֆիզիքական և բարոյական ու հոգեւոր տեսակէտով անարժանին վրայ սաւառնող սէրը:

Այս տեսակէտով Աստուծոյ ճշմարիտ մարմնացումն է Յիսուս: Անոր ալ մեծ փառքը կը կայանայ ոչ թէ իր հրաշագործութեան, հապա՛ր որ ողորմութեան, գութին մէջ, որմէ մղուած նա գուրգուրաց աղքատին, տկար մանկան, յուսալքուած որբեւարիին, մահուան մատնուած հիւանդին, բարիքը չըմբռնող դիւահարին և մեղքի տիղմին մէջ թաւալող պոռնիկին և մաքսաւորին վրայ: Այո՛, շնորհքէ, գութէ մղուած՝ նա անհուն ու աննկարագրելի տառապանք կրեց ու զոհուեցաւ՝ մեղքուելու տարուող ոչխարները, դատապարտեալ մեղաւորները փրկելու համար: Ահա՛ այդ գութին մէջն է մեր Փրկչին մեծափառութիւնը:

Հաւատացեալն ալ այնքան մօտ է փառքով իր Փրկչին ու Հօրը, որքան խոր ու ընդարձակ է իր գութը: Արդ՝ այս տեսակէտով մեր մէջ Ներսէս Պարթեւ ամենէն շատ նմանած է Քրիստոսի: Հետեւելով իր Տէրոջը օրինակին ու խօսքին, — «Գթած եղէք, ինչպէս ձեր Հայրն ալ գթած է (Ղուկ. 2 36), — նա մեր ազգին մէջ Աստուծոյ վեհափառութիւնը յատկանշող գութին առաքեալը եղած է եւ Հայաստանը լեցուցած է բարեգործական, մարդասիրական հաստատութիւններով, որոնք մեզի կը յայտնաբերեն իր կրած «բարի Սամարացիի» սիրտը:

Շինել տուաւ ուրկանոցներ^(*) ու հիւանդանոցներ և անոնց մէջ պատասպարեց բորոտներ, ուրուկներ և ուրիշ կարգի վարակիչ հիւանդութիւններէ տառապողներ, որոնք մինչեւ այդ ատեն մեծ մասամբ տնազուրկ և անպատասպար էին: Քաղաքներու և գիւղերու մէջ հաստատեց աղքատանոցներ և հոն հաւաքեց անխնամ մնացած որբերը, ծեբերը և անկար աղքատները: Օտարականներն ու պանդուխտներն ալ պաշտպանութիւն գտան հիւրանոցներու մէջ:

Ներսէս այս հաստատութեանց սեփականութիւնը դարձուց բազմաթիւ գիւղեր ու ագարակներ որպէսզի «անդաստաններու» բերքով և արօտականներու կաթով ու գեղմով անոնց ծախքերը հայթայթուին: Այդ գիւղերն ու ագարակները առնուեցան հաւանաբար անոնցմէ, զորս Տրդատ եկեղեցիներու նուիրած էր: Թերեւս

նախարարներն մեծ նուէրներ ըրին այդ մարդասիրական հաստատութեանց համար:

Ասոնց ամենուն վրայ Ներսէս ընդհանուր տեսուչ կարգեց խաղ սարկաւազապետը, զոր «պատմութիւնը կը ներկայացնէ իրրեւ միւս այլ Ներսէս թէ՛ բարեգործական աշխատութեամբ և թէ՛ վարչական հանճարովը» (Օրմանեան):

Ներսէս ոչ միայն պատճառ դարձաւ այս զթոյ գործերուն, հապա իր ամբողջ սրտովը կապուած էր անոնց: «Նախ ինքն անձամբ բարին կը կատարէր և ապա բարիի օրինակ կ'ըլլար ուրիշներուն»: Ինքն իր ձեռքերովը կը լուանար հիւանդները, «Կ'օծէր ու կը փաթթէր վէրքերը և ինքն անձամբ կերակուր կը կերցնէր անոնց իւրաքանչիւրին»:

Եւ իր հովուական ու հայրական գործունէութիւնը շարունակեց Ներսէս հայրապետ՝ «մինչեւ իր վախճանը առանց ո եւ է ծուլութեան ու յապաղման»: Ուստի ինչպէս Գրիգոր կոչուած է «լուսաւորիչ հոգեւոյ», նոյնպէս ալ Ներսէս «լուսաւորիչ սրտից»: Անիկա հայ Ժողովուրդին ցուցուցած է քրիստոնէական հաւատոյ վսեմութիւնը, իսկ ասիկա քրիստոնէական սիրոյ խորութիւնը: Ատով Ներսէս աւելի զօրաւոր կերպով արմատացուց քրիստոնէութիւնը Հայուն մէջ և զայն պատրաստեց իր արիւնտփն իսկ պաշտպանելու իր հաւատքը:

Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՏԱՐԵԴԱՐՁԻ ՅՈՒՇԵՐ

ՕԳՏԱԿԱՐ ԴԱՍԵՐ

Վեր. Ա. Զ. ԵՂՈՅԵԱՆԷՆ՝ հոգեւոր հօրմէս Խարբերդի մէջ սորված դասերէս ոմանք.

«Ուստի պիտի ջանամ որ իմ աշխարհէ ելլելէս ետքն ալ, միշտ կարող ըլլա՞ք այս բաները յիշել»: Բ. Պետ. Ա. 12-15

Անշուշտ շատերս, շատ բաներ սորված ենք իրմէ, որոնք մի առ մի յիշել, թերեւս կարելի ալ պիտի չըլլայ: Վստահ ըլլալով որ Պատուելին այն լայն բաները որ սորվեցուց հին օրերու մէջ, Պօղոսի պէս ջանաց որ իր աշխարհէ մեկնելէն վերջն ալ մենք զանոնք յիշենք, ես ալ ուզեցի զրի առնել պզտիկ հասակէս իրմէ սորված գոնէ քանի մը պարզ բաները, երկու ականակալութեամբ:

(*) Բորոտներու հիւանդանոց:

ա. որպէսզի ինձ նման տարիքով և հոգևով մանուկներ օրհնուին. ք. հոգեւոր գործաւորները քաջալերուին իրենց պգտիկներու վրայ թափուած աշխատանքներուն համար, զորոնք Տէրը ապարդիւն չընեն երբեք:

1. Տէր Յիսուս մեղաւորներուն փրկիչն է.— Առաջին անգամ վեր. Ա. 2. եղոյեանէն սորվեցայ, մանկութեանս մէջ թէ «Տէր Յիսուս Քրիստոս աշխարհ եկած է մեղաւորները փրկելու». Ա. Տիմ. 1. 15 թէ «Անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի Արիւնը մեզ ամէն մեղքէ կը սրբէ». Ա. Յովհ. 1. 7: Ան շատ եռանդով, 1914-15ի օրերուն մէջ կը քարոզէր Խաչեալ Յիսուսը: Այդ ժամանակ ներկայ էին, թաղէսեան դպրոցին աշակերտները: Տէրը արթնութեան քաղցրաշունչ հովը կը փչէր այդ ժողովարանին մէջ: Դեռ երկու օր առաջ էր, երբ ես երգեցի. «Թող սաստիկ սէր լեցնէ մեզ, աղօթքի մէջ զօրանանք...»: Իմ ականջիս կարծեցի որ կը հնչէ, Պատուելիին յուզիչ և ազդեցիկ ձայնը, և ես չկրցի իմ արցունքս զսպել, մանկութեանս մէջ իմ վրաս թողուցած քաղցր յուշերը մտաբերելով:

2. Ես մեղաւոր մըն եմ, եւ Յիսուս իմ փրկիչս է.— Սորվեցայ իրմէ հակառակ որ բողոքական և քրիստոնեայ ընտանիքի մը զաւակն էի, եւ կիրակի դպրոց յաճախող աղջիկ մը, բայց անոր ցոյց տուած Աւետարանի լոյսով, ինքզինքս ճանչցայ, ճանչցայ նաեւ մեղքերս, զանոնք խոստովանելով, հաւատքով թողութիւն և փրկութիւն ստացայ: Պատուելիին թափած աշխատանքովը, իմ հոգիին աշքերը բացուեցան, Յիսուսը ինծի համար խաչին վրայ զամուռած տեսայ եւ իմ անձնական Փրկիչս ընդունեցի: Տէրոջը փառք կուտամ, որ իր ծառային միջոցաւ Խնքզինքը մեղաւորիս յայտնեց:

3. Ի՞նչ է ճշմարիտ ծոմապահութիւնը.— Անգամ մը, երկու ընկերներով փափաքեցանք Ս. Սարգիսի երեք օրուան ծոմը պահել: Մեր դասընկերներէն ոմանք հասկցած էին քանի որ իրենց հետ սեղանը ճաշի չէինք նստեր: Անոնցմէ ոմանք մտադրած են որ երրորդ օրը նուէրով մը զմեզ այցելեն, միասին ծոմաբացութեան ուրախութիւն ընելու: Ինչպէս կ'ըլլայ, այս ծրագիրնին կը հասնի Պատուելիին ականջը: Ծոմապահութեանս երկրորդ իրիկունը զիս իր տունը կանչեց, թէ և գնահատեց իմ բարի նպատակս, սակայն զիս ուղղեց Ս. Գիրքի շիտակ ծոմապահութեան: Երկարատեւ իր քով պահելով խրատեց, յանդիմանեց և անխարդախ կաթին առաջ-

նորդեց իր նորածին հոգեղաւակը: Ասիկա վերջին Ս. Սարգիսի ծոմապահութիւնս եղաւ: Ասկէ առաջ չորս անգամ բռնած էի մանկական միամիտ սրտով: Աստուծոյ խօսքէն հետեւեալ հատուածներով սորվեցայ ճշմարիտ ծոմապահութիւնը. Մատթ. 2. 16-18, Եսայ. ԾԸ. 3-10:

4. Վէպ կարդալը Աստուծոյ զաւակի մը չվալիւր.— Ապաշխարելէս անմիջապէս վերջ, Եփրատ գօլէճը գիշերօթիկ մտայ ուսանելու: Հոն եղած գրադարաններու և բազմատեսակ գրքերու ճոխութիւններու անգիտակցաբար առեն մը տարուեցայ վէպ կարդալու հոսանքէն: Խղճիս վրան միշտ ծանր նիւթ մըն էր, և մտքիս մէջ հարցում մը, արդեօք կը վայելէ՞ ինծի: Միտքս դրած էի հարցնել Պատուելի հոգեւոր հօրս: Օր մը լսեցի որ մէկուն կարդացած «Թափառական Հրեան» գրքին Պատուելին դիտողութիւն ըրած է: Այս ինծի կենդանի պատասխան մը եղաւ, թէ Աստուծոյ զաւակի մը յարմար չէ վէպ կարդալը:

5. Քրիստոնեայ աղջիկ մը հագուստ կապուստի հոգ տանելու եւ կենսական նիւթի մը համար ալօթքով պատրաստուելու է.— Անգամ մը, Մէզրէի գերման Աբենեգեր շէնքին մէջ, Կիրակի առտու մը, Առակ. 31 գլուխէն բնաբան ընտրած էր «Առաքինի կինը». քարոզելէ վերջ առաջարկեց որ 16 տարեկանէն վեր եղող աղջիկներ հոն մնան: Ես ճիշդ 16 տարեկան էի եւ մեծ հետաքրքրութեամբ սպասեցի թէ ի՞նչ պիտի խօսի մեզի: Ան իր բնաբանէն, առաքինի կնոջ մասին շարունակեց, աղջիկներու յատուկ, գործնական կէտեր պարզօրէն թուել սկսաւ: Հայրաբար մեզ խրատեց, «Փրկուած աղջկան մը միշտ վայել է պարզ, զոց և երկայն հագնիլ: Պճնագարդ և շատ փայլուն հագուստ, որ ուրիշին ուշադրութիւնը կը գրաւէ, վայել չէ ձեզի...» ըսաւ: Պէտք է ձեզմէ ամէն մէկ փրկուած աղջիկ հիմակուրնէ աղօթէ իր ապագայ ընկերոջ համար: Ես կը հաւատամ որ Տէրը ձեր իւրաքանչիւրին համար յարմար ընկեր մը կը պատրաստէ, թերեւս հեռու քաղաքներու մէջ, պէտք է դուք աղօթէք, որպէսզի կարենաք Տէրոջ կամքը ճանչնալ: Թէ և կայնելով և զլուխս հակած կ'ունկնդրէի այս նոր պատգամը, սակայն սրտիս մէջ կը գետեղուէր նիւթ մը առանձին աղօթքի համար, և հոս յիշեմ թէ՛ յետայնու երբ շատ անգամ այս նիւթը իմ առջեւ կը բացուէր, յայնժամ հոգեւոր հօրս այս պատգամը զիս շնորհաց աթոռին առջեւ կը կեցնէր. այսպէս

եօթը տարի վերջ, այս պատգամի սզդեցութիւնը, վերջապէս զիս ուղղեց ճիշդ Տէրոջ նախախնամութեան: Տէրը կ'ըսէ. «Իմ բերնէս ելած խօսքն ալ... ինծի պարապ պիտի չդառնար, հապա իմ կամքս պիտի կատարէ...» Եսայ. ԾԵ 41:

6. Գրիչով ալ կարելի է Տէրը փառաւորել.— Երբ պզտիկ էի, ոտանաւորներ և բանաստեղծական կտորներ կարգալ շատ կը սիրէի, և կը փափաքէի գրել ալ: Օր մը գացի Պատուելիին հարցնելու ասոր համար. «Աստուծոյ զաւակի մը յարմար է ոտանաւորներ և բանաստեղծութիւններ գրել»: Այո, աղջիկս, աշխարհի վրայ շատ ճշմարիտ քրիստոնեաներ, մեծ բանաստեղծներ եղած են, գրիչով ալ Տէրը կրնայ փառաւորուիլ, եթէ հոգեւորապէս գործածուի, զուտ հոգեւոր բաներ գրելու: Այս պատասխանն ալ ինծի ուղղութիւն մը տուաւ:

7. Ժողովի մէջ շատ երկար աղօթել օգտակար է.— Անգամ մը ժողովի մը մէջ երբ եղբայր մը աղօթքը շատ երկարեց, Պատուելին անունը տալով ըսաւ... «Եղբայր, ալ հերիք է, նստէ»: Կը սորվեցնէր որ ժողովի մէջ երկար աղօթելը օգտակար չէ, ուրիշին աղօթքի եռանդը կը մարեցնէ: Այս ալ ինծի դաս մը եղաւ, սորվելու և սորվեցնելու: Երբ շատ անգամ ժողովներուն մէջ մէկը շատ կ'երկարէ աղօթքը, մտքէս կ'ըսեմ, հիմա Պատուելին հոս ըլլար, ասոր ալ հերիք է, նստէ, կ'ըսէր:

8. Իր խոստովանութեամբը խոստովանութիւն սորվեցայ.— Անգամ մը հօրս հետ պզտիկ խնդիր մը պատահած էր: Հօրս մէկ անհոգութեանը, խիստ վարժունք մը ցուցուցած էր: Ինքը այն օրը քարոզ մը պիտի պատրաստէ եղեր Սաղմ. ԺԸ 35ի վրայ, «Բու քաղցրութիւնդ զիս մեծցուց»: Կը ջանայ քարոզը պատրաստել, բայց չկրնար: Խիղճը իրեն կը ցուցնէ որ, ինքը քաղցր չգտնուեցաւ, ինչպէս քաղցրութեան վրայ պիտի քարոզէ:

Հագիւ կը մտաբերեմ այն առտուն, երբ մեր տան պատուհանէն կը դիտէինք, մէկը փաթթուած ցուրտէն, որ դժուարաւ կը քալէր սառած ձիւնէն: Անոր քալելը մեր տունը կ'ընթանար, զարմանքով կ'սպասէինք, հասկնալու թէ ո՞վ է. երբ մօտեցաւ, ճանչցանք որ մեր սիրելի հովիւն էր: Բայց ինչ էր զինք այդ խաճնող ցուրտին մեր տունը առաջնորդող զրգապատճառը, իր խղճմտանքին մէջ տիրող ցուրտն էր, որ զինք բերաւ խոստովանութեան կրակարանին շուրջ տաքնալու:

